Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԱՑ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 3. Արարատի մարզ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.-30.09.2024թթ. |
| Ներկայացման օր | 04.10.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Արմինե Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում** սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 44 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 1 դեպքի վարում (վերափաստագրման կազմակերպում), 2 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը**: Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 3 խմբակ, որոնց մասնակցել է 15 շահառու:
  Կենտրոնում գործող խմբակներն են՝
  - ✓ Երգ,
  - ✓ Առողջարար ֆիզկուլտուրա,
  - ✓ Ընթերցանության ակումբ:

  Կազմակերպվել է թվով 3 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է ընդհանուր 41 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
  - Էքսկուրսիա Աշտարակի Մուղնի, Սաղմոսավանք և Օհանավանք եկեղեցիներ,
  - Սրբ. Աստվածածնի վերափոխման տոնի խորհուրդը և տնօրնեք Արտաշատի ՅԿ-ում:
  - Հանդիպումներ քահանայի հետ
- **Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում** հաշվետու ժամանակահատվածում հոգեբանի կողմից թվով 41 շահառոի հետ կատարվել է խմբային աշխատանքներ և քննարկումներ, իրականացվել են տարբեր թեմաներով և տարբեր ոլորտներում՝ անձի ինքնագնահատականի ձևավորման, բնավորության և խառնվածքի մասին զրույց, ընդհանուր ինքնաճանաչմանն ուղղված տարբեր դիագնոստիկ թեստերի կիրառում, հիշողության և ուշադրության հետ կապված տարբեր թեստերի, հարցարանների կիրառում: Խմբային աշխատանքներ և խմբային քննարկումներ են արվել արտ-թերապևտիկ տեխնիկաների միջոցով: Կիրառվել է արտ-թերպիայի հետևյալ տեսակները՝ երաժշտական թերապիա, նկարչաթերապիա:
  Աշխատանք է իրականացվել ինքնաարտահայտման և ինքնադրսևորման մասով: Հաջորդող հանդիպումներին աշխատանք է տարվել հոգեկան լարվածության թուլացման, անձնային առանձնահատկությունների շեշտադրմանն ուղղված: Վեր են հանվել կոնֆլիկտային

իրավիճակներ և գտնվել են լուծումներ, որն էլ հանգեցրել է հոգեկան ներդաշնակության: Բացահայտվել են ներանձնային կոնֆլիկտները, արտահայտվել են հույզերը:

- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում առայժմ համացանցում նյութեր չեն տեղադրվել:

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 44/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 21 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 8 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 36 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 44 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 30 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 15 |
| 5.1 | Նշել խմբակի անվանումը՝ Երգ | 8 |
| 5.2 | Նշել խմբակի անվանումը՝ Ընթերցանության ակումբ | 10 |
| 5.3 | Նշել խմբակի անվանումը՝ Առողջարար ֆիզկուլտուրա | 11 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 17 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «04. 10 2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)